

ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ
Ա. ՎՈԱՄՅԱՆԻ ԾԱԾԿԱԳԻՐ ՆԱՄԱԿԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԹԱԼԵԱԹԻՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա. Հ.

Օսմանյան Թուրքիայի՝ համաշխարհային պատերազմի մեջ մըտնելու սկզբնական փուլում Վասպուրականի հայ ազգային գործիչները, իրենց ղեկավար կենտրոնների հրահանգներին համապատասխան, ուժասպառ եղած հայության տնտեսության քայքայման գնով, շարունակում էին բարեկամական սերտ հարաբերություններ պահպանել թուրքական իշխանությունների հետ՝ աջակցելով կառավարությանը կազմակերպված անցկացնել հայ երիտասարդության գորակոչը, ժամանակին գանձել հայ բնակչության վրա դրված պատերազմական հարկերը, ժողովրդին համոզել բարեխղճությամբ և անգամ զոհողությունների գնով կատարել օսմանյան երկրի քաղաքացու պարտականությունները և ընդհանուր պարտքը պետության հանդեպ: Դաշնակցական կոմիտեն ու Վանի առաջնորդարանը կաշվից դուրս էին գալիս իրագործելու համար Էրզրումի 1914 թ. ժողովի որոշումը և ամենահայտնի անօրենությունների նկատմամբ անգամ նրանք բնակչությանը հորդորում էին մնալ հնազանդ և «քրիստոնեաբար տանիլ չարչարանքի լուծը»¹: Եվ իրոք, հայ ժողովուրդը անգնահատելի զոհաբերություններ էր կատարում թուրքական պետության շահերը պաշտպանելու համար՝ նրան տրամադրելով անհաշիվ զինվորներ, հաց, դրամ և հագուստ:

Սակայն, այդ բոլորն անցնում են ապարդյուն, քանզի թուրքերը խաբում էին հայերին:

Հակառակ ծրագրվող և իրականացվող հայասպան քաղաքականությանը, թե՛ Վանի Ազգային առաջնորդարանը և թե՛ Վանի դաշնակցական ղեկավարները՝ Արշակ Վռամյանը (Օնիկ Դերձակյան), Արամը և Իշխանը, նույնիսկ իրենց կյանքի գնով, հանձն առան հնարավոր և անհնար ամեն տեսակի զոհողություններ կատարել Վանում և Վասպուրականի գավառներում՝ կառավարությանը շեղելու իր ոճրածին նպատակներից և կանխելու պետության և հայ ժողովրդի միջև ծայր առած անախորժ դեպքերը:

Եթե Արամն ու Իշխանն ամբողջովին կլանված էին միայն ներքաղաքական խնդիրներով, ապա Ա. Վռամյանը «կը ներկայանար կառավարութեան առաջ անխարդախ թարգման Վասպուրականի ամբողջ ցաւերուն, բողոքներուն, ոչ միայն թարգման, այլ պահպանող, յամառ հետապնդող»²: Ծանր էր նրանց կացությունը: Ամեն օր Վանի գավառներից բողոքներ էին տեղ հասնում

¹ Մխիթարեան Օն., Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930, էջ 25:

² Վոսյեան Հ., Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կռիւները, Ե., 1992, էջ 17:

կատարված կողոպուտների, սպանությունների և բռնաբարությունների մասին: «Առայժմ դարման չկայ, պէտք է տոկալ, պէտք է զգոյշ ըլլալ, պէտք է համբերել, պէտք է զոհողություններ յանձն առնել: Այս էր մշտական պատասխանը եղած դիմումներուն: Գիւղացիութիւնը չէր կրրնար լսել այդ «հայրական խոհեմ յորդորները»³: Այդ առիթով Ա. Դարբինյանը դիպուկ նկատել է. «Անձկութեան մատնուած էին նաեւ դաշնակցական ղեկավարները՝ Արամ, Վռամեան եւ Բշխան, այսինքն այն ղեկավարները, որոնք յանկարծ իրենց երէկուան երազատեսութենէն սթափած՝ կ'ապրէին Երկրին ահաւոր իրականութեան մէջ, որոնք, ի հարկէ, այժմ կ'անիծէին այն օրերը, երբ իրենք իբրեւ հայ ժողովուրդին ազատարարներ, իբրեւ «յեղափոխականներ», լրագրական էջերէն կամ միթիւնկներու բեմերէն կրակ ու բոց կը ժայթքեցնէին, իր «դարաւոր քունէն հայ ստորուկը» արթնացնելու, թուրք բռնակալութիւնը խորտակելու համար: Այո՛, երէկուան ճամարտակութեամբ հրճուող Վռամեանները. «այդ մենք են գալիս...» որոտացող Արամներն ու Բշխանները այսօր սմբեր, կծկուեր էին»⁴:

Սակայն 1914 թ. նոյեմբերից սկսած՝ Վասպուրականում և Պարսկաստանի սահմանամերձ շրջաններում տեղի ունեցած կոտորածներն անակնկալի բերեցին և զգաստացրին Վանի կուսակցական ու ազգային գործիչներին՝ մասնավորապէս դաշնակցականներին: Այդ բոլորից հետո էլ Վանի դաշնակցական ղեկավարները, չնայած խաբվում էին ոճրագործներից, «տակաւին յոյս ունէին իրենց թուրք ընկերներուն վրայ»⁵: Վատարված ծանրակշիռ դեպքերի առիթով Ա. Վռամյանը՝ որպէս Օսմանյան խորհրդարանի անդամ, 1915 թ. հունվարի 16-ին բողոքի ձայն է բարձրացնում Վանի կուսակալ Ջնդեթի և Էրզրումի վալի Թահսին բէյի դեմ, բայց հաջորդ անգամ Վանի կուսակալը նրան չի ընդունում⁶: Հետագա դիմումներն ու բողոքներն էլ են անցնում ապարդյուն: Այդ էլ այն պարագայում, երբ Վռամյանը, Արամը և Բշխանը կուսակալի անմիջական խորհրդակցականներն էին: Այժմ ժամանակները փոխվել էին: Կուսակալը նրանց խորհուրդների կարիքը չունէր և երեսներն անգամ տեսնել չէր ուզում: Այդ մասին Արմ. Եկարյանը հիշում է. «Իրենց (խոսքը դաշնակցության մասին է - Հ. Ա.) կողմէ դիտումներ կը կատարէին, սուտ ու փուտ խոստումներով ետ կը դառնային և ժողովրդի աչքին գործի վրայ կ'երեւէին: Կառավարութեան ղեկը իր ձեռքին մէջ ունեցող ոճրագործներու խմբակը սակայն իր ճամբան կը քալէր, ու երբ Վռամեանը (անդամ մէպուսանի աս ալ), իր խաբուած ըլլալը զգալով և իր հանգամանքը շատ լուրջի առնելով, ձայն կը բարձրացնէ կուսակալին վրայ, յաջորդ անգամին այս վերջինը կը մերժէ զինքը ընդունիլ: Կարելի չէ հանդուրժել իր աղմուկին և կոպտութիւններուն, ըսած էր կուսակալին օգնականը: Վռամեանը ճանչցող-

³ Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն. Յուշեր 1890-էն 1940, Փարիզ, 1947, էջ 157:

⁴ Նոյն տեղում, էջ 81:

⁵ Յուշեր Արմենակ Եկարեանի, Գահիրե, 1947, էջ 184:

⁶ Շիրակեան Ա., Կտակն էր նահատակներուն, Ե., 1991, էջ 42:

ները գիտեն թե, արդարեւ, այդպէս ալ էր ան քիչ մը... կառավարական քլիքը գործածեց Դաշնակցութիւնը որքան ատեն որ պէտք ունէր անոր. Արամը, Իշխանը, Վռամեանը իր խորհրդականներէն էին. բայց հիմա ամէն բան փոխուած էր. կուսակալը և իր արբանեակները ալ պէտք չունէին այդ խորհրդականներուն: Ճէվտեթ չէր ուզեր անոնց երեսն անգամ տեսնել⁷:

Այդ բոլորից հետո էլ Արշակ Վռամյանը, որը «նուրբ քաղա- քագէտի մը բոլոր ստորոգելիներով» օժտված անձնավորություն էր, չէր կարողանում ըմբռնել ոճրագործ իթթիհաստի թուրքերի հետապնդած բուն նպատակը:

Որպէս ՀՅԴ կուսակցության ղեկավար⁸ և Օսմանյան խորհրդարանի Վանի հայ պատգամավոր՝ «վեհանձն ու արդարակորով հաշտութեան առաքեալ»⁹ Ա. Վռամյանը, դրդված Արևելյան նահանգների կացության անաչառ վերլուծությունից, Կարճկանում (Բելու) և Գավաշում (Աթանան) սկիզբ առած ցավատիթ և դժբախտ դեպքերից հետո՝ «յանուն ընդհանուր Հայրենիքի շահերուն»¹⁰, 1915 թ. փետրվարի 14-ին (ըստ Անրի Բարբյուսի՝ փետրվարի 13-ին¹¹, իսկ ըստ Ա-Դոյի՝ հունվարի 25-ին¹²) տագնապի կացության վերաբերյալ մի ծածկագիր հիշատակագիր-հեռագիր է ուղարկում Կ. Պոլսի Բաբը Ալի՝ ներքին գործերի նախարար Թալեաթին¹³՝ փորձելով ճշտել այդ կացության ախտաբնությունը և ստեղծված կացությունից դուրս գալու ուղիները: «Բարեկամական դարման մը խնդրելով թախանձագին»¹⁴, նա ցանկանում էր, մի կողմից, մեղմել Վանի կուսակալ Ջնդեթի գահավեժ ընթացքի վրդովեցուցիչ թափը, իսկ մյուս կողմից՝ ջանալ շարունակել տեղական զինվորական իշխանությունների հետ բարեկամական հարաբերությունները: Այդ հիշատակագիրը դաշնակցական պատմագիտության կողմից ներկայացվում է որպէս Վասպուրականում 1915 թ. սկզբներին ստեղծված դժոխային կացությունը և արյունոտ դեպքերը ճշգրիտ ըմբռնելու, իրադարձությունները անաչառ և համարձակ վերլուծելու և քաղաքական հստակատեսության մի գլուխգործոց

⁷ Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 184:

⁸ Հիշատակագրում հեղինակը սխալմամբ ՀՅԴ-ի փոխարեն իրեն համարում է «Միություն և առաջադիմություն» կուսակցության «պետ» (Հանոի Պառպի, Սարսափի երկրին մէջ. նահատակ Հայաստան, Կ. Պոլիս, 1919, էջ 144):

⁹ Մխիթարեան Օն., նշվ. աշխ., էջ 25:

¹⁰ Հայրենիք, Բոստոն, 1924, ապրիլ, N 6, էջ 101:

¹¹ Հանոի Պառպի, նշվ. աշխ., էջ 144:

¹² Ա-Դո, Մեծ դեպքերը Վասպուրականում, Ե., 1917, էջ 115:

¹³ Ըստ հայկական աղբյուրների, այն ուղղված էր Օսմանյան Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ փաշային, իսկ ըստ «Միություն և առաջադիմություն» կուսակցության Համընդհանուր վեհաժողովում 1917 թ. սեպտեմբերի 24-ին Թալեաթ փաշայի արտասանած ճառի՝ Վանի վիլայեթի վալիին՝ Ջնդեթին (A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 862, 54-57). մեջբերել ենք «Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը եվ հայերը ֆրանսիական արհիվներում (1914-1918)» գրքի հ. II-ից (աշխատասիրությամբ՝ Արթուր Պեյլերյանի, Ե., 2005, էջ 69-71):

¹⁴ Գր. ծ. վարդ. Պալաքեան, Հայ Գողգոթան. դրուագներ հայ մարտիրոսագրութենէն. Պետլինէն դէպի Զօր. 1914-1920, հ. Ա, Վիեննա, 1922, էջ 61, Հովհ. ալ. քհ. Հաճեան, Հայոց տաճանքի ճամփաներով, հ. Ա, Թեհրան, 1965, էջ 375:

ու պատմական թանկագին վավերաթուղթ¹⁵: Իր հեռագրում Ա. Վռամյանը վերջին անգամ է դիմում թուրք ջարդարար փաշային ու նրա միջոցով նաև թուրքական «խելագար» կառավարությանը՝ ըմբռնել տալու համար հայ և թուրք ժողովուրդների իրական, ընդհանուր ու կենսական շահերը և վերջին անգամ փորձում է կանխել թուրքական հայաջինջ ծրագիրը մի այնպիսի ժամանակ, երբ իթթիհաստի կոմիտեն նիստեր էր գումարում ու ծրագրում, թե ինչպես կոտորել հայերին: Օն. Մխիթարյանի բնորոշմամբ՝ «Վռամեան համարձակորէն կը քննէր չարիքը, մատը կը դներ թարախակալ վերքին վրա և ասպետօրէն կը յայտարարէր թէ այլէս ներկայացած է հազուագիւտ եւ թերեւս վերջին պատմական պատեհութիւնը դարբնելու վերջապէս թուրք եւ հայ ցեղերու եղբայրակցութիւնը և փոխադարձ շահերու գիտակցութիւնը... վրաստահեցնելով թէ բարեբաստիկ թուական մը պիտի բացուի թուրք եւ հայ յարաբերութիւններուն մէջ եւ թէ Կովկասի ու տիեզերքի բոլոր հայերու յոյսերը պիտի կապուին Թուրքիոյ հետ...»¹⁶:

Ծածկագիր-հեռագիրը պարունակում էր ստեղծված իրավիճակի շարժառիթների գնահատական, դասալքության պատճառների վերլուծություն և առաջարկություն-պահանջների առաջադրում:

Միամիտ Ա. Վռամյանը ցույց է տալիս վերջին չորս ամսվա ընթացքում (1914 թ. նոյեմբերից մինչև 1915 թ. փետրվար) հայ ժողովրդի կրած տառապանքները և նշում կառավարության և հայ ժողովրդի միջև հաստատված աննորմալ հարաբերությունների չորս կարևոր պատճառները, որոնք «ախտաւոր կացութիւն» ստեղծեցին Վասպուրականում, և որոնք առաջ չգրավեցին տեղական իշխանությունների ուշադրությունը և հոգածությունը: Դրանք էին՝ ա) դասալքությունը, բ) հայ զինվորների և ժանդարմների զինաթափումը, գ) հայ ժողովրդի գոյությանը սպառնացող դեպքերը և դ) ջիհադի հռչակումն ու դրա սխալ ըմբռնումը:

Ա. Վռամյանը դասալքության համար առաջ էր քաշում երեք պատճառ՝ ա) 24 տարեկանից բարձր տարիք ունեցողների մարզված չլինելը, բ) 24 տարեկանից ցածր տարիք ունեցողների անկարողությունը՝ դիմանալու հանկարծահաս պատերազմի ծանր զրկանքներին՝ կապված ուտեստի և հազուստի հետ, գ) բանակում հայ զինվորների կրոնական խնդիրների անտեսումը և քամահրումը: «Յետին չարագործն անգամ,- նշում էր Ա.

¹⁵ Ամբողջական հեռագիրը տե՛ս **Հանդի Պատպի**, նշվ. աշխ., էջ 144-150, նաև Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 227, գ. 416, թ. 54-58, Հայրենիք, 1924, ապրիլ, N 6, էջ 97-101, **Մխիթարեան Օն.**, նշվ. աշխ., էջ 26-34: Ի դեպ, ծածկագրի ներածական մասում Օն. Մխիթարյանը Արամի և Վռամյանի քաղաքական վարքագիծը վերագնահատելու համար փորձում է դաշնակցությանը տարանջատել հայությունից՝ նշելով. «... ցոյց տալու համար ինչպէս հայութեան, նոյնպէս նաեւ Հ.Յ. Դաշնակցութեան ղեկավարներ Արամի եւ Վռամեանի քաղաքական վարքագիծը...» (**Հանդի Պատպի**, նշվ. աշխ., էջ 144):

¹⁶ **Մխիթարեան Օն.**, նշվ. աշխ., էջ 26-27, Հայրենիք, 1924, ապրիլ, N 6, էջ 97-98:

Վռամյանը,- իր մահուան ժամուն իրաւունք ունի կրօնի սփոփանք պահանջելու եւ այդ չի զլացուիր անոր»¹⁷:

Միաժամանակ, հիմնավորելով դասալքության քաղաքական, սոցիալական ու կրօնական շարժառիթները՝ նա մասնավորապէս նշում էր. «Հայ դասալիքներու թիւր շատ սահմանափակ էր սկիզբները և անհնար չէր այդ աննշան տոկոսն ալ անհետացնել տակաւ... Ատոր հակառակը, աղէտաւոր ու դժբախտ անվստահութիւն մը կառավարութեան կողմէ հայերուն հանդէպ, հայ ժողովուրդի գոյութեան իսկ սպառնացող կազմակերպուած բնոյթ ունեցող կարգ մը դէպքեր, ճիհատի հոչակումը եւ անոր միակողմանի ըմբռումը՝ եկան դասալքումի երեւոյթին տալու քաղաքական չարաշուք գոյն մը»¹⁸:

Ըստ Ա. Վռամյանի, դասալքության շարժառիթներն էին՝ ա) հայ զինվորների և հայ ժանդարմների զինաթափումը, որն անմիջապէս ստեղծեց քաղաքական անվստահության հեղձուցիչ մթնոլորտ, նպաստեց միջցեղային հարաբերությունների լարվածությանը հայերի ու մահմեդականների միջև, բ) զինաթափված հայ զինվորների օգտագործումը գրաստի փոխարեն, որը վիրավորեց նրանց մարդկային ու ազգային ինքնասիրությունը՝ ստորացնելով նրանց մահմեդական հայրենակիցների աչքին, գ) զինաթափված հայերը, գտնվելով մահմեդական զինվորների հսկողության տակ, կամ հարկադրված լինելով անգեն շրջել բորբոքված և սպառազինված մահմեդականների շրջանում, վտանգեցին իրենց կյանքը: Ահազանգեր կային գնդակահար, ջրախեղդ կամ դաշունահար եղած և անհետ կորած հայ զինվորների մասին՝ Էրզրումի և Պարսկաստանի ռազմաճակատներում, դ) տարբեր առիթներով զինաթափված հայ զինվորների հեռացումը իրենց գավառներից դէպի անձանոթ շրջաններ, ե) բոլոր մահմեդականների՝ հատկապէս 16-60 տարեկան բոլոր քրդերի անխտիր զինումը «միլիսների» անվան տակ և ռստիկանական-ժանդարմական պաշտոնների հանձնումը նրանց, որով նրանք հաշերի հանդէպ ստացան տիրապետող ու զսպող ուժի իրավունք, զ) միլիսների շահատակությունները, կատարած բռնություններն ու սպանությունները Թիմար գավառի հայկական Այլուր, Խավենց, Ամյուկ, Գավաշի շրջանի՝ Բելու, Ընձաք, Նանիկանց և Կարճկանի Եղեգիս գյուղերում՝ Բաղեշի միլիսի ու չերքեզ սպայի ջոկատի կողմից, Միսկներ գյուղի բռնաբարությունները՝ Եոմեր աղայի միլիսների կողմից և Պարսկաստան գնալու ժամանակ Բշարե-Չաթոյի՝ 600 հոգուց բաղկացած խմբի կատարած վայրագությունները Մանազկերտի շրջանում, Վանի նահանգի հյուսիս-արևելյան շրջանի գյուղերում, Մշո դաշտում և Միլվանի (Տիգրանակերտի) 12 հայկական գյուղերում, է) ծանոթ քուրդ ոճրագործների՝ Մեհմեդ Էմինի, Մուսա և Գասրմ բեյերի և շատ ուրիշների ներումն ու զինումը և նրանց՝ իրենց գյուղերում կամ հայաբնակ շրջաններում մնալը, ը) զինված քրդերի մեծ քանակով փախուստը բանակից և այդ դասալիքների կենտրոնացումը Վանի ու Բիթլիսի նահանգների լեռնային

¹⁷ Հայրենիք, 1924, ապրիլ, N 6, էջ 98:

¹⁸ Նույն տեղում:

գավառներում, թ) համիդիների մնալը հայաբնակ գավառներում ու նրանց կատարած ավերն ու թալանը, Հասան-Թամրանում, Ախտոհկում, Պողասբեսենում, Հազարայում, Մանտանում, Պստիկ գյուղում՝ Սատրմբեկի ջոկատի կողմից, ժ) վերջապես, Բաշկալեի, նրա շրջակա հայկական գյուղերի, ինչպես նաև Ախտոհկի, Ավգարիկի, Հասան-Թամրանի, Հազարենի ու Դաշ-Օղլուի ջարդերը¹⁹:

Վերոհիշյալ 10 պատճառները ժողովրդին մղում էին պատվի, կյանքի և ինչքի ապահովությանը, մի ժողովրդի, որին մեղադրում էին անհավատարմության և անվստահության մեջ՝ էլ ավելի ծանրացնելով նրա կացությունը հարևան քրդերի շրջանում: Ա. Վռամյանը կյանքի, պատվի և գույքի ապահովության խնդիրը համարում է բնական ու նվիրական իրավունք և մատնանշում, որ կառավարությունը բանականությանը, խղճին և առողջ քաղաքականությանը հակառակ կգործի, եթե հայերին պարտադրի անզեն զինվորական ծառայություն, քանի որ այն կսպառնա նրանց կյանքին, իսկ նրանց անպաշտպան ընտանիքներն ամեն վայրկյան ենթակա կլինեն զինված և կիսավայրենի քրդերի «արիւնոտ քմահաճոյքներուն»²⁰:

Ըստ Ա. Վռամյանի, գորակոչից խուսափելը տրամաբանական էր, քանի որ՝ ա) հայերից հավաքած զինվորներին չէին զինում, այլ օգտագործում էին դիրքերը փորելու, պարենը շալակով փոխադրելու նպատակով, բ) մեծ չափերի հարկեր էին հավաքում հայերից, գ) շատ հաճախ հայերին բանտարկում ու գնդակահարում էին:

Ա. Վռամյանը փորձում է բացատրել, որ, եթե հակառակ ջիհադի կոչի, պատերազմից խուսափում էին նույնիսկ մահմեդականները, ապա անիրավություն և անարդարություն էր դասալիք անունը տալ հայ զինվորին, «որուն կը զլացուի էական ստորոգելիքը իր պարտականութեան, որ զէնքն է»²¹:

Հաշվի առնելով հայերի դասալքության ընկերային, կրոնական և քաղաքական պատճառները, տնտեսական հետևանքները, հայկական օջախներին սպառնացող վտանգը և ավագակությունները՝ Ա. Վռամյանը խոհեմաբար առաջարկում էր Ջևդեթին՝ 1) զենքի տակ զինվորական ծառայության մեջ պահել բոլոր այն հայերին, որոնք զինվորական պատրաստվածություն էին ստացել 1910-1914 թթ., 2) մինչև հայերի և կառավարության միջև վստահության վերահաստատումը հայ զինվորներին իրենց գավառներում և նահանգներում օգտագործել ժանդարմների պաշտոնում, 3) 24 տարեկանից բարձր՝ զինվորական ծառայություն չանցած զինակոչիկներին ազատել բանակից և նրանցից վերցնել միայն պատերազմական չափավոր փրկանք, 4) ճշտել, ստուգել և օրենքի ամբողջ խրստությամբ պատժել Բաշկալեի, Ախտոհկի, Ավգարիկի և Հազարենի հայերի ջարդերի

¹⁹ Նույն տեղում, էջ 98-99: Հատկանշական է, որ Ա. Վռամյանը չի անդրադարձել ավելի վաղ տեղի ունեցած՝ Արճեշի Հասպիսնակ, Բերկրիի Գյուզակ, Գործոթ և Արճեշի Տաղվերան գյուղերի կոտորածներին:

²⁰ Նույն տեղում, էջ 99:

²¹ Նույն տեղում:

պատասխանատուներին, կողոպտողներին ու թալանողներին²², 5) անմիջապես գործադրության մեջ դնել գյուղական պահակների օրենքը, որ էրզրում տեղափոխված՝ Վանի նախկին կուսակալ Թահսին բեյի օրով ծրագրված էր որպես օրենք կազաների (գավառների) ու նահիեների (գավառակների) համար, 6) զենքի համար հայերին չհետապնդել, ընդունելով, որ հայերն էլ կարող են զինվել, քանի դեռ չեն զինաթափվել կիսավայրենի քրդերը, 7) կառավարական ուժերի օգնությամբ կողոպտիչներից հետ ստանալ ջարդի ենթարկված հայերի կամ միայն թալանված հայկական գյուղերի գույքը և նրանց համար սահմանել պետական նպաստ, մինչև նրանց տնտեսական վերականգնումը, միաժամանակ, զինվորական ծառայությունից և հարկերից ազատել ավերված գյուղերի բնակիչներին, որպեսզի նրանք հնարավորություն ունենային պահպանել իրենց ցիր ու ցան և ճղակոտոր եղած ընտանիքները, 8) միլիսներին զինել միայն բանակատեղերում՝ թույլ չտալով, որ նրանք գիշերեն հայկական գյուղերում և նրանց չտալ ժանդարմական պարտականություններ, 9) գտնել, վերադարձնել կամ պետական միջոցներից փոխհատուցել թալանված եկեղեցիների ու վանքերի բռնագավթված գույքը, բռնի կրոնափոխ եղած և առևանգված կանանց ու աղջիկներին վերադարձնել իրենց ընտանիքները և ահ ու սարսափով մահմեդականացված հայերին թույլ տալ վերադառնալ իրենց կրոնին²³:

Ա. Վռամյանը նպատակ ուներ այս առաջարկներով վերջ տալ ստեղծված ծանր իրավիճակին և վերականգնել, մի կողմից, հայ ժողովրդի վստահությունն իր ապահովության, իսկ մյուս կողմից՝ կառավարության հանդեպ, որովհետև «... տեղի ունեցած ջարդերն ու թալանները ակամայ կուզան նորոգել յուշերը 1895-1896-ի Համիտեան սեւ օրերուն»²⁴: Սակայն, ըստ Ա. Վռամյանի, սահմանադրական շրջանի վստահության վերականգնումը և հայ ժողովրդի ապահովության հաստատումը բավարար չէին ամրապնդելու հայերի և թուրքերի «անխզելի կապերը»՝ տնտեսական շահերի ապահովման համար: Բանն այն է, որ սահմանադրական Թուրքիան չկարողացավ հաղթահարել արդուլիհամիդյան վարչակարգի սխալները և ապահովել հայ ժողովրդի ապագայի վերածնունդը: Ադանայի կոտորածը, հողային և այլ կարգի առկա խնդիրները հայերի մեջ կասկած առաջացրին, թե «դժոխային նպատակ մը կը սնուցուի հայ ժողովրդի բուն իսկ գոյութեան դէմ»²⁵: Այդ կասկածները էլ ավելի խորացան համաշխարհային պատերազմի ժամանակ, որին մասնակից դարձավ նաև Թուրքիան:

Ա. Վռամյանը հույս ուներ, որ պատերազմի ժամանակ Թուրքիան կարող էր հայ ժողովրդին սիրաշահելու համար նրա առջև բացել քաղաքական և քաղաքացիական հավասարության նոր հորիզոններ և եվրոպացի

²² Խոսքը վերաբերում է Սարայի գայմագամ Քյամիլին, Ոստանի գայմագամ Շյուքրիին և Բաշկալեի թափուր աղասի Ահմեդ բեկին:

²³ ՀԱԱ, ֆ. 227, գ. 416, թ. 57-58, Հայրենիք, 1924, ապրիլ, N 6, էջ 100, Մխիթարեան Օւ., նշվ. աշխ., էջ 30-31:

²⁴ Հանտի Պառայի, նշվ. աշխ., էջ 149, Հայրենիք, 1924, ապրիլ, N 6, էջ 100:

²⁵ Հայրենիք, 1924, ապրիլ, N 6, էջ 100:

նահանգապետներ Հոֆի ու Վեստենենկի հեռանալուց հետո, իր շահերից էլնելով, իր ձեռքում կենտրոնացնել բարենորոգման գործը: Մակայն թուրքական կառավարությունը թույլ տվեց քաղաքական ծանրագույն սխալ և անտեսեց այդ բոլորը:

Այս բոլորը մատնանշելուց հետո Ա. Վոսախյանը «խորթ զավակ» հայերի հույսերը վերջին անգամ օսմանյան կառավարության հետ կապելու, «դարբնելու թուրք եւ հայ ցեղերու եղբայրակցությունն ու գիտակցությունը»²⁶ և արևմտահայության բարենորոգման գործը կառավարության ձեռքում կենտրոնացնելու համար առաջադրում է խալիֆայական իրադեոլ (պետական հրամանագրով) գոհացում տալ հայոց «համեստ» պահանջներին, որոնք հետագայում կարող էին համաձայնեցվել Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի և հայ քաղաքական կուսակցությունների հետ: Այդ պահանջներն էին՝ 1) օսմանյան խորհրդարանում ապահովել հայերի համեմատական ներկայացուցչություն ու ազգային ընտրություն, 2) ապահովել, որ հայաբնակ վեց նահանգներում նահանգային ժողովների ու էնձյումենների (վարչական խորհրդի) 100-ից 50-ը հայ լինի, 3) ապահովել, որ հայաբնակ վեց նահանգներում բոլոր տեսակի պաշտոններում 100-ից 50-ը հայ լինի, 4) հայաբնակ վեց նահանգներում հայերենը պետականորեն հավասարվի թուրքերենին, 5) հայկական դպրոցները պետք է ստանային պետական դպրոցների կարգավիճակ, իսկ հայ համայնքից ստացվող հայ առաջնորդարանների կրթական տուրքը գոյանար պետության միջոցով, և կրթական տասանորդն ամբողջությամբ և ուղղակի վճարվեր հայ առաջնորդներին, 6) բանակի հայ զինվորների թվի համեմատ հայ սպաներ պատրաստելու համար ամեն տարի որոշ թվով հայ ուսանողներ ընդունել բարձրագույն և զինվորական դպրոց, 7) հայ ազգային կալվածները ճանաչել իբրև հայ ժողովրդի անվիճելի սեփականություն՝ վերջնականապես վերջ դնելով էֆգաֆի (վակֆների վարչություն) ոսնձգություններին, 8) հողավեճերը լուծել իրենց բոլոր փուլերում՝ հայ օրինական տերերին վերադարձնելով նրանցից հավիշտակված հողերը:

Ա. Վոսախյանը հույս էր հայտնում, որ վերոհիշյալ կետերի իրագործումը պետք է նպաստեր ինչպես վստահությունը վերականգնելուն հայ և թուրք ժողովուրդների հարաբերությունների մեջ, այնպես էլ իր խոր և արգասավոր ազդեցությունը պիտի ունենար կովկասահայության մեջ՝ «կապելու տիեզերքի բոլոր հայերուն յոյսերն ու ապագան օսմանեան կայսրութեան հետ»²⁷: Վերջում նա ավելացնում էր. «Յանուն մեր ընդհանուր Հայրենիքի շահերուն ստիպողաբար պիտի խնդրեմ Ձեզ չի գոհանալ միայն իսթիլամի (հարցումներ-րի – Հ. Ա.) դրութեամբ, այլ բազմակողմանի քննության մը բովկն անցնել զայս...»²⁸:

Այս ծածկագրով Ա. Վոսախյանը փորձում է մեղմել հայ-թուրքական լարված հարաբերությունները և միաժամանակ հասկացնել իր «ընկեր» Թալեաթին, որ 1914 թ. հունվարի 26-ին ստորագրված հայկական բարենորոգումների ծրագիրը, որից

²⁶ Նույն տեղում, էջ 101:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում, էջ 98-101:

իթթիհատականները խիստ դժգոհ էին, գոնե միայն պահանջում է վերը նշված հարցերի կարգավորումը՝ դրանով աշխատելով կանխել հայերի համատարած ջարդը:

Չնայած հայրենական պատմագիտության մեջ մատնանշվում է, որ ծածկագիր-հիշատակագիր նամակը «դաւադրօրէն վար դրուեցաւ եւ չդրկուեցաւ իր նպատակին»²⁹, սակայն պարզվում է, որ այն ոչ միայն հասել է իր հասցեատիրոջը, այլև Թալեաթն իր անձնական վերաբերմունքն է արտահայտել այդ հիշատակագրի նկատմամբ, որն, ըստ էության, պետական մոտեցումն էր:

Նորահայտ արխիվային մի վավերագիր հավաստում է, որ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի 1917 թ. սեպտեմբերի 24-ի Համընդհանուր վեհաժողովում Թալեաթ փաշան իր արտասանած ճառում Ա. Վռամյանի հուշագիրը նույնացնում էր 1914 թ. հունվարի 26-ի բարենորոգումների ծրագրին, որը խիստ անընդունելի էր օսմանյան իշխանությունների համար: Այդ մասին նա իր ելույթում հիշատակում է. «Պատերազմի երրորդ ամսին, Վանի պատգամավոր Վռամյանն այդ վիլայեթի վալիին (Ջնդեթին – Յ. Ա.) մի հուշագիր ներկայացրեց, որտեղ շարադրված էին հայկական պահանջները, և որը համանման էր նախօրոք Բարձր Դռանը հանձնված հուշագրին»³⁰: Անհեռատես Ա. Վռամյանը Թալեաթից խնդրում էր մի բան, որը դարձել էր հայոց ցեղասպանության պատճառներից մեկը և մինչ Ա. Վռամյանը հայրենասիրության և մարդասիրության կոչ էր անում Գ. Պոլսի ղեկավարությանը և տարրական անդորրություն էր պահանջում հայության համար, չգիտեր, որ նույն ժամանակահատվածում «Բօսֆորի ոճրագործ պալատներում» իթթիհատի կոմիտեն՝ նույն Թալեաթի թելադրությամբ, ինչպես Ս. Արարատյանն է նշում, «նոր շաւիղներ ու նոր մէթօղներ էր ընդգրկում նոր Թիւրքիան», բայց ոչ թէ հայկական նահանգների տարաբախտ հայ զանգուածի կեանքն ու գոյքը կազմակերպուած յարձակումներից պաշտպանելու նպատակով, այլ բովանդակ հայութիւնը ջարդի, գաղթի ու քաղցի միջոցով բնաջնջելու դիտաւորութեամբ»³¹: Որոշվում էր Թուրքիայում բնակվող բոլոր հայերի բնաջնջումը իր՝ Ա. Վռամյանի հետ միասին³²:

Դաշնակցականները, նրանց թվում և տարաբախտ Ա. Վռամյանը, դեռևս հույսեր էին փայփայում իթթիհատի հետ՝ ակնկալելով դրական արդյունք և՛ ըստ էության, քննեցնելով հայերի ինքնապաշտպանության գործը, ոչ մի բան չձեռնարկելով ադետի առաջն առնելու համար: Ուստի, Ա. Վռամյանի ծածկագիր-հեռագիրը՝ ուղղված Թալեաթին ոչ միայն դիվանագիտական հնարք չէր, այլև միամիտ քաղաքական գործչի գործունեություն, որովհետև նրա

²⁹ Վեր. Արսեն Ա. Կեօրկիզեան, Վասպուրականի հերոսամարտը 1915 ապրիլի 7 – 1915 մայիսի 7. Յոյս և Լոյս, Պէրոյթ, 1965, էջ 72:

³⁰ A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 862, f. 54-57 (Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հ. II, էջ 70):

³¹ Արև, Բաքու, 15.VIII.1915, N 124:

³² Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 83:

բացատրագիրը և պահանջները բխում էին 1914 թ. հունվարի 26-ի բարեփոխումների ոգուց, որոնք, չնայած արդարացի և իրավացի լինելուն, անընդունելի էին թուրքերի համար: Մինչ այդ նման տեղեկագիր խորհրդարանի և ոչ մի երեսփոխան չէր ներկայացրել Բ. Դռանը, քանի որ այն մեծ համարձակություն էր պահանջում:

Ա. Վռամյանը 1915 թ. փետրվարին իր ժողովրդին կարող էր փրկել միայն ինքնապաշտպանության կազմակերպմամբ, քանի որ ուրիշ ելք չկար: Մինչդեռ ինչպես Արամը, այնպես էլ Ա. Վռամյանը փորձեցին բոլոր ճանապարհները և հանձն առան ամեն տեսակի զոհաբերություն: Իրապես, Ա. Վռամյանն էլ, Արամն էլ շատ ջանքեր կթափեն, որ «չափով մը գոնե գոհացում տային կառավարութեան պահանջին»: Նրանք հարազատ թարգմանն էին ՀՅԴ-ի Կարինի ընդհանուր ժողովի որոշումների, որոնց համաձայն, հայությունը պետք է իր քաղաքացիական մասնակցությունն ու աջակցությունը բերեր օսմանյան հայրենիքին, որ «գործադրեցին Վասպուրականի մէջ իր ողբկան եւ տառական ամբողջ իմաստով»³³:

Ա. Վռամյանի ծածկագիրը, չնայած նրա՝ պետական շահերով տարվելուն, այնուամենայնիվ, չճառայեց իր նպատակին: Հ. Լեփսիուսի գնահատմամբ՝ «Վռամեանի յիշատակագիրը բանի մը չճառայեց, եթէ ոչ այն նպատակին, որ կառավարութիւնը պատրաստուած ըլլայ իրեն դէմ. հետեւաբար իր կեանքը վտանգի մէջ է»³⁴: Միաժամանակ, այն չի բավարարում տեղական ու կենտրոնական կառավարությունների պահանջները: Վանի փոխ-կուսակալ Շերիֆ բեյը մերժեց անգամ հանդիպել Ա. Վռամյանին նշելով. «...ես չեմ կրնար դիմանալ իր կոշտութեան ու պռոտախօսութեան»³⁵, և նրա դիմումին կարևորություն չտրվեց: Ընդհակառակը, այդ ծածկագրից հետո վայրագության դեպքերը գնալով Վան-Վասպուրականում մեծ ծավալ ստացան: Վանի նոր կուսակալ-նահանգապետ, ալբանացի Թահիր (Թահար) փաշայի որդին՝ Ջնդեթ բեյը, որ մինչ այդ Բաշկալեի (Հեքարիի) մութասարիֆն էր, և որը կազմակերպել էր Բաշկալեի հայերի ջարդը, 2000-անոց կանոնավոր զորքով գալիս է Վան, իսկ այդ զորքը կենսական անհրաժեշտություն էր Սալմաստի ռազմաճակատի համար: Նա սկզբում բարյացակամորեն է վերաբերվում հայ ղեկավարների հետ, բայց մի քանի շաբաթ անց «գառան մորթու» տակից դուրս է գցում «գալլի դունչը» և պահանջում, որ 18-50 տարեկան բոլոր տղամարդիկ ներկայանան ու մտնեն բանակ՝ որպես ամրաշեն բանվորներ (ամելե թափուրի): Վանի ղեկավարությունը գիտակցում էր, որ դա ջարդ է, բայց փորձում է մասամբ բավարարել կուսակալի պահանջը՝ տալու շաբաթական 500 մարդ: «Գոնե կառավարութեան պահանջած 4000ին փոխարէն 7-800 դասալիք ետ դարձնենք»³⁶: Երկար պայքարից հետո կուսակալն ի վերջո

³³ Հայրենիք, 1924, ապրիլ, N 6, էջ 97:

³⁴ Գաղտնի տեղեկագիր **Տօթ. Եօհաննէս Լեփսիուսի** (նախագահ գերման Մօտաւոր Արեւելքի Միսիոնին եւ Գերմանեւհայկական ընկերութեան). Հայաստանի ջարդերը, Կ. Պոլիս, 1919, էջ 197:

³⁵ **Պրայս**, Հայկական ջարդերու փաստաթուղթերը, Ա մաս, կազմեց Վահան Վիրազենց, Կ. Պոլիս, 1920, էջ 106:

³⁶ **Դարբինեան Ա.**, նշվ. աշխ., էջ 158:

համաձայնվում է հայերի հետ, որ շաբաթը 500 մարդ տան, և երկու ամսվա ընթացքում Վան քաղաքի երիտասարդները՝ թվով 4000 հոգի, ներկայանան կառավարություն: Վանի երիտասարդությունը դրան դեմ էր և Ա. Վռամյանից պահանջում է դիմել զենքի՝ առանց անտեղի զոհեր տալու:

Ա. Վռամյանի՝ «աննկուն եւ մեթոտիկ աշխատանքներով ու յարաբերական գործերով» աչքի ընկնող դիվանագիտական այս գործունեությունը, որ տևեց մինչև 1915 թ. ապրիլի 3-ը, և որի շնորհիվ բացահայտվեցին ջնդեթյան սադրանքներն ու դավերը, տարբեր կերպ է գնահատվել կուսակցական պատմագիտության կողմից: Դաշնակցական պատմագիտությունը, բարձր գնահատելով անվեհեր երեսփոխանի թափած ջանքերը, նրա գործունեության ամբողջական գնահատականը թողել է ապագային, «այն ատեն միայն, երբ լոյս կ'ընծայուին իր յիշատակագրերը, հեռագրերը, պահանջագրերը, օր օրին ունեցած յուշատետրերի արձանագրութիւնները»³⁷:

Իսկ ռամկավարները այն հեզանքով կոչել են «խոհեւ» և «ողբացեալ» Վռամյանի «նրբամիտ դիվանագիտություն»³⁸:

СЕКРЕТНОЕ ПИСЬМО ДЕПУТАТА ОСМАНСКОГО
ПАРЛАМЕНТА А.ВРАМЯНА, АДРЕСОВАННОЕ ТАЛЕАТУ

АРУТЮНЯН А. А.

Резюме

На начальном этапе вступления Османской Турции в Первую мировую войну армянские национальные политические деятели Васпуракана продолжали поддерживать дружеские отношения с турецкими властями. Однако массовая резня армян, организованная в Васпуракане в ноябре 1914 года, явилась неожиданностью и насторожила национально-политических деятелей Вана. Армянский депутат османского парламента А. Врмян 14 февраля 1915 года отправил секретное письмо министру внутренних дел Османской Турции Талеату, в котором просил изыскать способы предотвращения резни в Васпуракане. Однако письмо А. Врмяна не только осталось безответным, но и не пресекло будущих погромов.

³⁷ Կոստյեան Հ., նշվ. աշխ., էջ 15:

³⁸ Դարբինյան Ա., նշվ. աշխ., էջ 157:

**THE SECRET LETTER OF A. VRAMYAN, A MEMBER
OF THE OTTOMAN PARLIAMENT, ADDRESSED TO TALEAT**

A. HARUTYUNYAN

Abstract

At the initial stage of the entry of Ottoman Turkey into World War I, Armenian national Vaspurakan politicians continued to maintain friendly relations with the Turkish authorities. However, the statesmen in Van were taken aback by the massacres that took place in Vaspurakan starting from November 1914. A. Vramyan, an Armenian member of the Ottoman Parliament, on February 14, 1915, sent a secret telegramme to Taleat, the Minister of Internal affairs of Ottoman Turkey, requesting that he should prevent the massacres in Vaspurakan. Not only did his letter remain unanswered but also the massacres escalated on their scale.